

**Ազգային ինքնության պահպանման և նահանջի թեման  
Փիթեր Նաջարյանի «Հիշողության դուստրերը» վեպում**

*Նելլի Գալստյան*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2024.1-81>

*Հանգուցային բառեր. ամերիկահայ արձակագիր, ազգային ինքնություն, նահանջ, գոյափոխություն, ներաշխարհ, պատում, անցյալի հիշողություն, անհատականություն, եղենապատկեր, ինքնության փնտրտուք*

**Նախաբան**

Նահանջի գաղափարական և գեղագիտական հարցադրումները կազմում են սփյուռքահայ գրողների ստեղծագործության առանցքը: Օտարագիր հայ գրողները ցավով են նկատում, որ ժամանակն ու միջավայրը հեռացնում են հային ազգային խորհրդից. և՛ օտար բարբերը, և՛ կենցաղը աստիճանաբար դառնում են կենսաձև, աստիճանաբար դուրս է մղվում մայրենին, փոխվում են բարոյական ընկալումները: Մտահոգիչ է իրողությունը: Ահա այս հարաձուռն դիմորոշ դարձող հարցադրմանն են արձագանքում օտարագիր հայ գրողների երկերը: Նրանք լրացնում, ամբողջացնում են 20-30-ական թթ. Ֆրանսիայում ձևավորված Նահանջի գաղափարաբանությունը նոր հերոսներով ու նոր մանրամասներով, նկատելի սրությամբ ընդգծում սոցիալական գործոնը, առաջադրում ազգային կենսապայքարի հնարավորություններ: Փիթեր Սուրյանը, Փիթեր Նաջարյանը, Նենսի Գրիգորյանը և ուրիշներ ակամա դարձան Նահանջի գրականության հետևորդներ, գրականություն, որը միտված էր և միտված է նահանջի դեմն առնելու, սթափեցնելու օտար ափերում հաճող հայրողներին, նրանց ետ բերելու ազգային ավագան: Նրանց վեպերը սփյուռքահայության կյանքը պատկերող լավագույն գործերից են, որտեղ գրողները պարզորոշ ընդգծում են նոր աշխարհի «օրենքները», բարոյական չափանիշները, հայի ներքին դրաման հին ու նոր կյանքի համադրությամբ, նյութական և հոգևոր շահագրգռություններով: Որտեղ էլ լինեն օտարագիր հայ գրողները, նրանք իրենց ստեղծագործություններով հետամուտ են լինում ազգային ինքնության, ազգային ոգու պահպանմանը, առանց որի Սփյուռքում հայը, որն իր ոտքերի տակ չունի ազգային ենթահող, դարերով մշակված կենցաղ, ազգային միջավայր, ըղձական հայրենիքի տեսիլ, դատապարտված է ձուլման:

Օտարության մեջ գտնվող հայի ինքնության նահանջի արմատները կարող ենք փնտրել սերնդափոխության, մշակութային նոսրացման, ինքնության հակասությունների, լեզվի կորստի և մշակութային ապապահպանման գործոններում:

Չոզվածի նպատակն է 20-րդ դարի հայ-ամերիկյան անգլիագիր գրող Փիթեր Նաջարյանի «Հիշողության դուստրերը» վեպի ուսումնասիրությամբ բացահայտել և արժևորել ազգային ինքնության թեման՝ իր արտացոլումներով և դրսևորումներով:

Վեպում քննության ենք առել հայ-ամերիկյան գրողի առջև դրված հիմնախնդիրները՝ աշխարհասփյուռ հայության ազգային ինքնությունն ու ապրելու իրավունքը պահպանելու անխոնջ ջանքերն ու մաքառումները:

Ներկա ժամանակներում աշխարհասփյուռ հայության առջև ծառայած նորօրյա մարտահրավերների, լինելության բարդ իրավիճակների պայմաններում թեման ունի արդիական հնչողություն:

## Հողվածի բովանդակությունը

20-րդ դարի ամերիկյան արձակուրդում իր մեծ ներդրումն ունի ազգությամբ հայ արձակագիր Փիթեր Նաջարյանն հայ կյանքը պատկերող իր «Ուղևորություններ» և «Հիշողության դուստրերը» վեպերով և համամարդկային խնդիրներ քննող բազում վիպակներով, պատմվածքներով, գրաքննադատական աշխատություններով:

1986 թվականին Փիթեր Նաջարյանը գրում է հայ կյանքը պատկերող իր երկրորդ վեպը՝ «Հիշողության դուստրերը» (**“Daughters of Memory”**), որում հավասարապես ներկայացնում է ազգային ինքնության պահպանումն ու նահանջը: Վեպը բռնել է ժամանակի քննությունը, արժանացել բարձր գնահատականի:

«Փիթեր Նաջարյանի ստեղծագործությունն ունի առեղի կենսական ուժ և համարակություն: Հարկավոր է, որ նրա հիասքանչ նկարները լինեն ընդգրկված այս գրքում, և դա կդառնա ամբողջովին իրենը,– գրում է ամերիկացի գրաքննադատ Ռ. Փինսկին:– Նրա տեսլականը անսխալական է, համարձակ, խորիմաստ, իսկ նախադասություններն օժտված են իրեն հատուկ ռիթմով» [4, ներածական մաս]:

Իսկ ահա ամերիկացի մեկ այլ քննադատ՝ Ռ. Հեսնս այսպես է գնահատում ամերիկահայ գրողի երկը. «Մա մի համարձակ գիրք է, որն իր զգացմունքայնությամբ ավելի մոտ է Ուիթմենի «Out Of The Cradle Endless Rocking»-ին կամ Գինսբերգի «Kaddish»-ին, քան իմ իմացած որևէ այլ արձակ ստեղծագործության: Դա ողբերգական գիրք է, որը զրկված է որպես քնարական արիաների շարք, իսկ տարեց կանանց երգչախումբը պարզապես հիանալի է: Ես վաղուց հիացած եմ Փիթեր Նաջարյանի գրքով. սա, հավանաբար, նրա լավագույն գիրքն է, և ինձ շատ դուր են գալիս դրանում ներկայացված նկարները» [4, ներածական մաս]:

Ամերիկահայ արձակագրի վեպը բարձր է գնահատել նաև գրաքննադատ Թ. Վոլֆը. «Նաջարյանն օգտագործում է պատմությունն ու արվեստը և անձնական պատմվածքն այնքան միաձուլված՝ մեկը մյուսից դուրս բերված, մինչև որ դրանց միջև սահմանագծերն անհետանան: Այս երկար պատմությունն ինքնաճանաչման և ինքնաներման փնտրտուք է, մտքի թռիչք, որը ռումանտիկ է, քան երբևէ» [4, ներածական մաս]:

«Հիշողության դուստրերը» վեպը նախորդ վեպի «Ուղևորությունների» թեմատիկ շարունակությունն է: Եթե առաջինում գրողը պատկերում էր եղեռնը ականատես վկայի աչքերով, ապա այս ստեղծագործության մեջ չկան եղեռնապատկերներ:

Ի տարբերություն «Ուղևորությունների», որում գործողությունները կատարվում են Արևմտահայաստանում և Ամերիկայում, այստեղ ընթանում են միայն Ամերիկայում: Ճիշտ է նկատել գրաքննադատ Մ. Վեպլին. «Փիթեր Նաջարյանը կերտել է մի ստեղծագործություն, որն ավելի շատ օտար երանգներ ունի, քան այն ամենը, ինչն ընթերցողը կարող է հանդիպել ամերիկյան զեղարվեստական գրականության մեջ: «Հիշողության դուստրերը» արտացոլում է մի ժողովրդի պայքարը» [4, ներածական մաս]:

Նաջարյանի «Հիշողության դուստրերը», ինչպես և նախորդ վեպը՝ «Ուղևորությունները», ինքնության որոնում է և դրան կառչելու փորձ: Վեպում գրող-հերոսը փորձում է իր անցյալը հետագծել կանացի կերպարների միջոցով և կապել անցյալը ներկայի հետ: Դա մշտապես ներկա անցյալն է, որը անընդհատ ներգործում է ներկայի վրա, տապալում հերոսի՝ դժբախտությունից, ողբերգական անցյալից վեր բարձրանալու, ինքնությունը գտնելու ջանքերը: Նաջարյանն իր հերոսների մեջ կարողանում է մշակել կյանքը մտածողական-վերլուծական, հոգեբանական-փիլիսոփայական խորքով ընկալելու և մեկնելու բավարար հայեցողություն:

Գոյափիլիսոփայական որոնումների ենք հանդիպում նաև «Հիշողության դուստրերը» վեպում: Ինչպես նախորդ վեպի, այնպես էլ այս վեպի պլուսետային զարգացումն անցյալի ու

ներկայի համադրված քննությունն է: Նաջարյանի հերոսները հաճախ սովորական հանդիպումների, խոսք ու գրույցի ժամանակ շեղվում են բուն նյութից, տրվում անցյալի հիշողություններին՝ բացահայտելով ինչպես ներկան՝ սքողված անցյալով, այնպես էլ իրենց այն անհատականությունը, որ բնորոշ է հայ մարդուն:

Վեպի հիմնական գործողությունները տեղի են ունենում Ֆրեզնոյում: Գրողը պատմում է կալիֆորնիական այս քաղաքի իրական առօրյայի մասին, որը ներառում է վտարանդի հայերին և տեղաբնակներին: Վեպի վերնագիրը հուշում է, որ Նաջարյանը վեպը գրելիս դիմել է անցյալին, հին հունական առասպելաբանությանը, ավելի կոնկրետ՝ հունական դիցաբանության հիշողության աստվածուհի Մենմոսինի մուսաներին՝ Ջևսի դուստրերին: Ժամանակակից իրականությունն ինքն է պարտադրում դիմել անցյալին, հետադարձ հայացքով ընդգրկել քաղաքակրթության անցած ուղին: Այդ հետազոծում պարզ են երևում ներկայի արատավոր երևույթների արմատները: Դիմելով հին հունական առասպելին՝ գրողը ցանկացել է ընդգծել աշխարհի հավերժ անհեթեթության և անիմաստության գաղափարը՝ շեշտը դնելով ճակատագրի կողմից մարդու մշտտան դատապարտվածության վրա: Գրողը մուսաներին համեմատում է վեպի վտարանդի երեք ծեր հերոսուհիների հետ, որոնց ընդհանրությունն արվեստին պատասխանատու լինելն է: Ի տարբերություն նրանց՝ եղեռնատես հայ տարեց կանայք նաև ազգային ինքնության պահպանման կրողներն են: Նրանց խոսակցության հիմնական նյութը ողբերգական ցավերով ու վշտերով, տառապանքներով ու փորձություններով լի անցյալն է և ներկան: Նրանք ծեր են, մոռացված, չսիրված, բայց դեռ սիրահարված են կյանքին: Այս տարեց կանանց միությունը ամերիկահայ գրաքննադատ Մ.Պետրոսյանը համեմատում է հունական դիցաբանության մուսաների երգչախմբի հետ [2, 58]: Նաջարյանի հերոսները գրավիչ են, ուշադիր միմյանց նկատմամբ, նրանք ձգտում են մարդկային ջերմության, և իրենք էլ կարողանում են ջերմ լինել:

Փիթեր Նաջարյանը միտումնավոր վեպի հերոսներ է դարձրել ծերերին և երիտասարդներին: Ծերերը, որոնց նկատմամբ գրողը տածում է ջերմ վերաբերմունք, պահպանում են տեղեկություններ անցյալի մասին, նրանք են փորձի, իմաստության կրողները, երիտասարդները հույսն ու երազանքն են, նաև՝ ապագան: Փիթեր Նաջարյանն անցյալը հետազոծում է գլխավոր հերոս Ջեքի և ծեր կանանց երգչախմբի միջոցով և պատմում իր ընտանիքի պատմությունը, որը սկիզբ է առել Անատոլիայում, շարունակվել Ամերիկայում: Հիշողությունն ու իրադրությունը շարժվում են արևելքից արևմուտք և անցյալից ներկա (Հայաստան, Ալեքսանդրիա, Էլիս կղզի, Հոբոկեն, Բերկլի), այնուհետև՝ Լոնդոն, Իտալիա, Հունաստան, Թուրքիա: Անցյալը ստեղծագործության մեջ ներկայանում է երկու ձևով, նախ՝ որպես կենդանի և գործող մի ուժ, ապա՝ որպես սոցիալական և պատմական որոշակիությունից, երբեմն նույնիսկ ժամանակից ու տարածությունից դուրս մի աշխարհ. այնպես, ինչպես Ջեյմս Ջոյսի «Ուլիսես» (1918) վեպում: Անգլիացի գրողի նմանողությամբ Փիթեր Նաջարյանը դիմում է հեռավոր անցյալին, անցյալի ավանդույթներին: Թե՛ Ջոյսը, թե՛ ամերիկահայ գրողը գլխավոր հերոսին բնութագրում են ներաշխարհով՝ ներսից, ցուցադրում են ոչ թե նրա գիտակցված գործողությունները, այլ նրա հոգեկան աշխարհը, ծանր ապրումները, ճնշվածությունը, կրքերն ու բնազդները, որոնք ժամանակ առ ժամանակ վեր են հանում նրա ենթագիտակցությունից: Փիթեր Նաջարյանը միակ անգլիագիր հայ գրողն է, որն իր պատումը ներկայացնում է արվեստների գրականության և նկարչության համադրությամբ: Նա իրերին և երևույթներին նայում է արվեստագետ-լուսանկարչի քննախույզ հայացքով: Գեղարվեստական պատումով ազգային ինքնության որոնումը գրողի համար բավարար չէ, ուստի նա դիմում է նաև նկարչությանը: Նկարները, հատկապես դիմանկարները, արտացոլում են մարդու ներաշխարհը, ազգային ինքնությունը: Եվ պատահական չէ, որ հերոսը հա-

մառորեն փորձում է անցյալի հիշողության թաքստոցներից վեր հանել տաստի պատկերը՝ ջանալով թափանցել մոր հիշողության մթազնած շերտերի մեջ: Ինչո՞ւ հենց ազգային ինքնության փնտրտուքի ճանապարհին է նկարիչ հերոսը որոնում տաստի պատկերը. ազգային դիմագծերը, աչքերը, հայացքը կանանց մոտ առավել ցայտուն են արտահայտված: Սակայն ո՛չ մայրը, ո՛չ էլ տարեց կանայք չեն կարողանում մտաբերել, ուրվագծել նրա դիմանկարը. անցյալը մեկընդմիջտ նրանց հիշողությունից ջնջել է այն՝ տեղը թողնելով տեղահանության, կոտորածի դաժան պատկերներ: Ձեքը փորձում է մոր դիմագծերով վերականգնել տաստի դեմքը. տաստից անպատճառ մորը փոխանցված կլինեն դիմագծեր, և ինքը վերջապես կգտնի իր ազգային ինքնությունը, սակայն ապարդյուն, բախվում է դատարկության, տատը անցյալից ներկայանում է նրան անդեմ: Փորձում է նրան գտնել իր մեջ, դարձյալ ապարդյուն: «Փիթեր Նաջարյանի «Հիշողության դուստրերը» վեպում,– նկատում է գրաքննադատ Հ. Վոնգը,– հայ մոր կերպարը ներկայացված է որպես մշակութային կորուստ, ինքնություն, ինչպես նաև գոյատևում» [6, 20]:

Իր ազգությունից Ձեքը, ինչպես նախորդ վեպի հերոս Արամը, ժառանգել է մեծ քիթ և ճաղատ գլուխ: Սակայն սրանք բավարար չեն իր ազգային ինքնությունը պարզելու համար: Ինքնության փնտրտուքով Ձեքը մեկնում է իր պապերի երկիրը, հանդիպում հայ ծերունիների, ովքեր ցեղասպանության ժամանակ մանուկ հասակում հայտնվել էին թուրքական որբատներում: Նրանցից շատերը հայերեն չգիտեն, թրքախոս են, ավելին՝ նրանցից ոմանք իրենց անցյալից ոչինչ չեն հիշում, ոմանք էլ վարանում են հայ ներկայանալ չջանկանալով վտանգել իրենց կյանքը: Նրանք հարմարվել են թուրքական կառավարության օրենքներին, իրենց համարում են այս երկրի մի մասնիկը: Նրանց համար խորթ է հնչում հայ բառը, նրանցից շատերը հայկական անուն, ազգանուն չեն կրում: Սա միանգամայն հասկանալի է. նրանց հիշողությունից թուրքը ջնջել, վերացրել է հայ բառը: Այստեղ Ձեքը միանգամայն ճիշտ է նկատում. ազգությամբ թուրք և հայ ծերունիները իրարից ոչնչով չեն տարբերվում, դարձել են մի միս ու արյուն:

Շեղվելով ազգային ինքնության որոնման ճիշտ ուղուց՝ հերոսը այն որոնում է թուրք մարմնավաճառների միջավայրում, որոնց հետ հարաբերություններ է ունենում, որոնք, ինչպես ինքն է նշում, ոչնչով չեն տարբերվում այլ երկրներում ապրող մարմնավաճառներից:

Վեպում սեռական էներգիան ներթափանցում է գրեթե բոլոր տողերը, ընթերցողին ներքաշում հիշողության և մոռացության, անցյալի և ներկայի, երագանքի և իրականության, սեքսուալության, բռնության և արվեստի միջանցքները: «Սեռի և սիրոյ արտայայտութիւններում, – գրում է Մ.Դանիելյանը,– նոր կերպարները հայ մարդու մեջ ընդգծում են ապրելու, վայելքի նախապայմանը, ինչն ազգային խնդիրների հանգոյցում, թուում է կանգնեցնում է նոր երկուսութիւնների առջև:

Երկուսութիւնը յաղթահարուած տառապանքն է: Օտար կանանց նուաճող Սփիւռքի գրական հերոսի արեան մեջ զգում ենք տեղատուութեան փոփոխութիւնները, *Նահանգի* աներկբայ արտայայտութիւնները, որովհետեւ սերը, զգացումը վկայում են մարդու, մարդկայինի յատկանիշները, ինչը ներքին ընդջրեայ շերտերում հակադրուում է հայի լինելիութեան պարզ ուրուագծումին» [2, 175-176]: Միանգամայն ճիշտ և դիպուկ է ասված:

Չէրոսը գալիս է այն եզրահանգման, որ թուրքերը, հայերը և մյուսները բոլորն էլ մարդիկ են, որոնք ծեր հասակում և մերկ վիճակում իրարից այնքան էլ չեն տարբերվում: Ձեքը հիշեցնում է «Ուղևորություններ» վեպի հերոսին՝ Արամին, թե՛ իր արտաքինով, թե՛ անբարո կյանքով: Նա միանգամայն այլ ուղիով է որոնում տաստի պատկերը, իր ինքնությունը: Մինչդեռ միակ ճիշտ ուղին իրեն շատ մոտ է, ցեղասպանությունը վերապրած հայ ծեր

կանայք են, որոնք դժոխքի միջով անցնելով, չեն կորցրել զգոնությունը, կենսասիրությունը, հայի՝ մահին հաղթելու անկոտրում ոգին: Նրանք օժտված են մարդուն ներելու, հավատալու, նրան աջակցելու հատկություններով, ազնիվ են ու պարզ, գիտեն արտասովել ու կատակել և երբեք չհուսահատվել: Այս տարեցներն իրենց առօրյա լցնում են զանազան խոսակցություններով, մույթ հիշողության անցքերից պեղում-հանում են անցյալի հոգեցունց պատկերներ: Առավել ուշագրավ է ծեր կանանցից մեկի խորհուրդը. «Մի՛ կորցրու քո հիշողությունը, եթե դա վերանա, մենք այլևս չենք լինի» [4, 156]:

«Դրանք գեղեցիկ են հնչում, գեղեցիկ են մատուցվում, արժեքավոր ներդրում են հայ մշակույթի մեջ և ողջ մնալու համընդհանուր ցանկություն. գոյատևել, կատակել և ներել: Այս բեկորներն ունեն իրականության գեղեցիկ փայլը. այս կանայք բոլոր իմաստներով հաղթել են մահին և շարունակում են գրուցել իրենց բժիշկների, սերիալների, իրենց գոյատևման մասին»,– նշվում է Լ.ուս Անջելես Թայմսում [3]: Գոյափիլիսոփա Նաջարյանին մարդը ներկայանում է իբրև կոնկրետ մի բան՝ իր կյանքով, կենսական իրավիճակում կատարած իր արարքով: Ամենագլխավորը տվյալ անհատի գոյությունն է իբրև ամբողջություն՝ իր զգացմունքներով և ցանկություններով, որի վրա էլ Նաջարյանը բևեռում է իր ուշադրությունը: Հանդիպելով անհաջողությունների՝ Ջեքը շարժվում է դեպի նոր կյանք, որտեղ այլևս չի կրի տատի ու պայպի ցավը: Անցյալը թույլ չի տալիս նրան առաջ շարժվել, և հերոսը փորձում է կապերը խզել անցյալից, նամանավանդ որ արդեն ցեղասպանություն ապրածները մահվան շեմին են: Նա, ի վերջո, ստեղծում է կանացի կերպար, որը տարբեր վայրերում հայտնվում է նրան տարբեր տեսքերով, որոնք համընկնում են անապատում մահացած տատի, մոր, արվեստի պատմության կին գործիչների, երագների կանանց, որոնց նա սիրահարվել է, տարբեր բնույթի հարաբերություններ ունեցել: Ջեքի անձնական որոնումները միահյուսված են նրա մտերիմ ընկերների՝ Չարլիի և Դոլորեսի պատմությունների հետ, որոնց կյանքն արտացոլում է 1960-ականների շարժը:

Փիթեր Նաջարյանը ներկայացնում է հաճույքների հորձանուտն ընկած երիտասարդությանը և միտումնավոր իր ցուլարձակն ուղղում է դեպի հայ երիտասարդը՝ ցույց տալու հայ երիտասարդության բարոյական անկումը, ազգային ավազանից հեռացումը:

Որոնումները հերոսին հանգեցնում են նրան, որ արվեստում ազգային ինքնությունը երկրորդական, գուցե և երրորդական դեր ունի, ինքը՝ որպես արվեստագետ-նկարիչ, չպետք է տրվի ազգային որևէ նկրտումների: Արվեստագետի համար համամարդկային արժեքներն են կարևոր, և ինքը պետք է ուղորդվի դրանցով: «Նաջարյանը,– պնդում է Չ.Վոնգը,– սովոր է իր պատկերավոր հուշերում կնոջը նույնացնել գեղեցկության, ցանկության, բնության և արվեստի հետ» [6, 20]:

Նաջարյանը կարողացել է պատկերել երեք սերունդներին ցեղասպանության հասցրած վնասը: «Երրորդ և չորրորդ սերունդների ազգամիջյան պատկանելությունը ընտրովի մերձեցման խնդիր է,– գրում է անգլիագիր գրականագետ Խ.Թոլոյանը,– մեծամասնության կողմից պարտադրված բեռ: Ազատությունը պահանջում է թոթափել էթնիկ խմբի ներսում պարտադրված հիշողության բեռը: 1960-ականներից հետո այն դառնում է ցավի գլխավոր աղբյուրը» [5, 35]:

Նաջարյանը, պատկերելով անցյալն ու ներկան, ցույց է տալիս ձուլման անխուսափելիությունը, և ինչպես նկատել է Մ.Պետրոսյանը. «Ժամանակակից ամերիկյան գեղարվեստական գրականության լավագույն արձակ ոճերից մեկով գրված «Հիշողության դուստրերը» վեպով օգնել է հայերին հասնել իրենց հետքին, ինքներս մեզ և ուղորդող մեզ դեպի սերը, որը փրկում է պատմությունը» [1, 60]:

Գրողի գերնպատակը միայն նահանջող երիտասարդության պատկերումը չէր: Ավելի

ճիշտ կլինի ամրագրել այն միտքը, որ նրա գրողական առաջադրությունը հայերին վատասերումի ճանապարհից ետ կանգնեցնելու գեղարվեստական փորձն էր, որը դառնում է ընկերության մեջ զուտ բարոյագիտական, «առաքելական» նպատակ, ինչն արդեն միտումի նշան է և ռեալիստական մտածողությունից շեղում: Ի տարբերություն նախորդ վեպի՝ այստեղ կան գաղափարական, կառուցվածքային խնդիրներ, որոնք առաջնային իրենց դերով թուլացնում են գեղարվեստական ակնկալվող տպավորությունը: Մեկնական երկարաբանությունը, անհարկի և ձանձրալի մեջբերումները խանգարում են ասելիքի գեղարվեստական որոշակի ընկալմանը, դիտվում որպես քարոզչական ջանք: Վեպում քիչ չեն ինքնանպատակ կիրառված նատուրալիստական պատկերները, որոնք վնասում են վեպի ռճային միասնության խնդրին: Օրինակ, Ջեքի՝ Արևմտյան Հայաստանում անցկացրած օրերի ձանձրալի մանրամասները: Այսուհանդերձ, վեպի գլխավոր շեշտադրությունը նահանջի գաղափարական մեկնությունն է:

### **Եզրակացություն**

Փիթեր Նաջարյանը «Ճիշտության դուստրերը» վեպով պատկերել է հարագատ հողից կտրված հայի՝ օտար միջավայրում ազգային արմատներից աստիճանական օտարումը՝ նահանջը, ցեղասպանության ականատեսների զավակներից ոմանց՝ անցյալի ըմբռնման և գնահատման անկարողությունը, պատմությունից դասեր չքաղելու ցավալի իրողությունը, ամերիկացումը, ազգային արժեքների ուրացումը, հայ ազգի բարոյական նկարագրի խաթարումը՝ փորձելով գեղարվեստի ուժով հային հետ պահել ուժացումից և օտարացումից:

**DOI:** <https://doi.org/10.58726/27382915-2024.1-81>

### **Գրականություն**

1. Bedrosian M., Peter Najarian. Daughters of Memory, W. A. Jordan III California State Polytechnic University, Pomona, Explorations in Sights and Sounds No. 7 (Summer 1987), pp. 58-60.  
Էլ. հղում՝ <https://scholarscompass.vcu.edu/cgi/viewcontent.cgi?article=1273&context=ess> (մուտք՝ 22.03.2021).
2. Դանիելեան Ս., Միջուկի տրոհումը, Սփյուռքահայ գրականության պատմություն, գիրք 1, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2011, 408 էջ:
3. Diamonds as an Armenian Male Writer's Best Friend, Daughters of Memory by Peter Najarian, Los Angeles Times, Times, California Times publication, BY CAROLYN SEE, 1986.  
Էլ. հղում՝ [www.latimes.com/archives/la-xpm-1986-08-11-vw-2585-story.html](http://www.latimes.com/archives/la-xpm-1986-08-11-vw-2585-story.html) (մուտք՝ 15.10.2020).
4. Najarian P. Daughters of Memory, New York, City Miners & Books, 1986, ներածական մաս:
5. Tololyan Kh. Armenian American Literature, New Immigrant Literatures in the United States, a Sourcebook to Our Multicultural Literary Heritage, London, Greenwood Press, Westport, Connecticut, 1996, 35 p.
6. Wong H. Picturing Identity: Contemporary American Autobiography in Image and Text. Chapel Hill: The University of North Carolina Press, 2018, 20 p.

## Тема сохранения традиций и отступления от национальной идентичности в романе Питера Наджаряна «Дочери памяти»

*Нелли Галстян*

### Резюме

**Ключевые слова:** *Американо-армянский писатель, национальная идентичность, уединение, экзистенциальная философия, внутренний мир, стена, память о прошлом, индивидуальность, наскальная живопись, поиск идентичности.*

В статье мы рассмотрели роман Питера Наджаряна «Дочери памяти», изображающий армянскую действительность. Питер Наджарян – американский писатель армянского происхождения, автор многих романов, повестей, рассказов и литературно-критических статей, внесший большой вклад в современную прозу. Его роман «Дочери памяти» является одним из лучших произведений, изображающих жизнь армян Диаспоры, где писатель наглядно подчеркивает «законы» нового мира, моральные нормы, внутреннюю драму армян в границах старой и новой жизни, материальных и духовных интересов.

Где бы ни находились зарубежные армянские писатели, они своими произведениями стремятся к сохранению национальной идентичности и национального духа, без чего армяне в Диаспоре, не имеющие под ногами национальную почву, веками культивируемого образа жизни, национальной среды, представлений о будущем родины, обречены на ассимиляцию.

Роман П. Наджаряна «Дочери памяти» – это поиск идентичности и попытка уцепиться за нее. В романе писатель изобразил постепенное отчуждение армян от национальных корней в чужой среде, отступление, неспособность свидетелей геноцида (в том числе – детей) понять и оценить прошлое. Здесь изображены болезненная реальность неизвлечения уроков истории, американизация, отрицание национальных ценностей, подрыв морального облика армянской нации под влиянием искусства, возможность предотвращения ассимиляции и отчуждения армян.

Цель статьи – раскрыть и оценить тему национальной идентичности с ее рефлексией и рецепцией на примере романа «Дочери памяти» Питера Наджаряна, американского писателя армянского происхождения.

# The Theme of Preservation and Retreat of National Identity in the Novel "Daughters of Memory" By Peter Najarian

*Nelli Galstyan*

## Summary

**Key words:** *American-Armenian novelist, national identity, retreat, existential philosophy, inner world, wall, memory of the past, individuality, rock painting, search for identity*

In the article, we examined the novel "Daughters of Memory" depicting the Armenian reality by Peter Najarian, the author of many novels, short stories, and literary criticism. P. Najarian is an Armenian novelist who made a great contribution to the American prose of the 20th century.

The novel "Daughters of Memory" by the Armenian-American writer Peter Najarian is one of the best works depicting the life of Armenian Diaspora. Here the writer clearly emphasizes the "laws" of the new world, moral standards, the internal drama of the Armenian with the combination of old and new life, material and spiritual interests.

Wherever foreign Armenian writers are, they pursue the preservation of national identity and national spirit with their works, without which the Armenian in the Diaspora, lacking national subsoil under his feet, a lifestyle cultivated for centuries, a national environment, a vision of a desired homeland, is doomed to assimilation.

Najarian's novel "Daughters of Memory" is a search for identity and an attempt to cling to it. The author of the book captured in its pages the gradual alienation from one's national roots of an Armenian isolated in a foreign land, the retreat, the incapacity of some children of genocide witnesses to comprehend and value the past, the painful reality of not taking history lessons to heart, Americanization, the denial of national values, and the eroding of the moral image of the Armenian nation through attempts to use art as a weapon against assimilation and alienation.

The purpose of the article is to reveal and appreciate the theme of national identity with its reflections and manifestations by studying the novel "Daughters of Memory" by Peter Najarian, an Armenian-American English writer of the 20<sup>th</sup> century.

In the novel, we examined the problems faced by the Armenian-American writer, the tireless efforts and struggles to preserve the national identity and right to live of Armenians around the world.

Ներկայացվել է 06.01.2024 թ.  
Գրախոսվել է 19.02.2024 թ.  
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.